յուղարկէ եւ ձեր Խոյթը 150,000 զօրք պաշարեն: Ես այդ մտածութիւնն ունիմ երեկվնէ ի վեր, եւ կը վախեմ, որ այս ուրախութիւնը տրտմութեան դառնա եւ այդ աւարը տարին չի լրացած Արաբիս ճամփան բռնէ:

— Շատ կարելի է, որովհետեւ մեր հայը մարդ չէ:

— Է՛հ, ես ձանձրացեր եմ լսելեն, թէ «հայը անմիաբան է», «հայը ազգատեաց է», «հայը օտարասէր է», «հայը անպիտան է», «հայը վախկոտ է» եւ այլ այսպիսի սերտ եալ խօսքեր, իբրեւ թէ նոքա, որ այս խօսքերը կը զրուցէին, հայ եւ հայու որդի չլինէին. իբրեւ թէ ուրիշ ամէն ազգք՝ յոյն, պարսիկ, ասորի, արաբ նաեւ միաբան եւ միահոգի լինէին. աշխարհիս երեսը ինչպէս մարդիկ դէմքով տարբեր են՝ նոյնպէս շահերով, դիրքով, բնաւորութեամբ տարբեր են. յիմար նա է, որ կուզէ անկարելին կարելի ընել: Ես գործադրելու բուն բանը քեզ կը հարցնեմ, որ ոչ միայն գործի մարդ ես, այլ եւ կը տեսնեմ թէ շատ խելօք մարդ ես: Հայը եթէ մարդ լինէր՝ ի՞նչ պէտք էր ընել. այն զրուցէ՛:

— Հարցմունքը լաւ է, պատասխանն ալ պատրաստ է. բայց քեզի պէս պատուական եւ քաջ երիտասարդ իշխանի մը կրնայ սիրտը վիրաւորել եւ զայրացնել, անոր համար չեմ ուզէր զրուցել:

— Խնդրեմ, եւ հայութեան, եւ քրիստոնէութեան սիրոյն համար պարտք կը ձգեմ զրուցել:

— Ուրեմն զրուցեմ: Ո՛ւր որ հայ կայ պէտք է միաբանին եւ առանց նախարարաց իրենց գլխուն ճարը տեսնեն, ան ատեն թերեւս հայ ազգը իր փրկութիւնն գտնէ:

Այս անկարծելի խօսքին վրայ զարմացած մնաց իշխանը եւ կարմրութիւն մը ելաւ երեսին՝ բայց դարձեալ առանց կիրք յայտնելու ըսաւ.